



Policy Forum Armenia
1250 I (Eye) Street N.W., Suite 710
Washington, D.C. 20005, USA
exrelations@pf-armenia.org
www.pf-armenia.org

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Policy Forum Armenia-ն խստագույնս դատապարտում է Էդիկ Բաղդասարյանի նկատմամբ նոյեմբերի 17-ին իրականացված բռնությունը, համարելով դա ոտընձգություն ազատ խոսքի դեմ: Կազմակերպությունը կոչ է անում Հայաստանի իշխանություններին դրսևորել անհրաժեշտ կամք և անհապաղ միջոցներ ձեռնարկել հանցագործներին բացահայտելու և պատասխանատվության ենթարկելու համար: Հարկ ենք համարում շեշտել, որ սա այս տարվա ընթացքում յոթերորդ գրանցված բռնությունն է լրագրողի նկատմամբ Հայաստանում:

Վստահ ենք, որ հազարամյա գրավոր խոսքի ավանդույթ, քննադատական մտքի հսկաներ Խորենացի, Ֆրիկ, Նարեկացի և այլոց ծնած ժողովրդին վայել չէ լինել այն երկրների շարքում, որտեղ ազատ մտածելու և գրելու պատճառով քաղաքացիները ենթարկվում են բռնության: Նրանք՝ ովքեր չեն դատապարտում նման երևույթը, անուղղակիորեն մասնակից են դառնում հանցագործությանը և անասելի վնաս հասցնում մեր հավաքական վարկին:

Հարգելի պարոն Բաղդասարյան և Հետքի մեր մյուս գործընկերներ.

անչափ ցավում ենք, որ բիրտ ուժից ու վախկոտության դրսևորումներից բացի քիչ բան է առաջարկվում ի պատասխան ձեր արդյունավետ գործունեությանը, և հայրենիքում տեղ գտած բացասական երևույթների ձեր անկողմնակալ լուսաբանմանը: Ձեր անտրտունջ աշխատանքն ու քաղաքացիական ազնիվ դիրքորոշումը անչափ գնահատելի են և օրինակելի: Policy Forum Armenia-ն ձեզ հայտնում է իր համերաշխությունն ու պատրաստակամությունը պայքարելու ազատ խոսքի ու մարդու իրավունքի այլ դրսևորումների պաշտպանության գործում: Հորդորում ենք ձեզ շարունակել պայքարն ու վառ պահել այն կրակը, որն հազարամյակով բոբոքել են գրչի մեր վարպետները, լուսավորելու համար մեր ժողովրդի վառ ապագան:

26.11.2008